



# ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԻԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ

## Diocese of the Armenian Church of America

TELEPHONE:  
LEXINGTON 2-5790

630 SECOND AVENUE  
NEW YORK 16, N. Y.

Թիւ 11131  
Մարտ 17, 1964

Արժանաշնորհ  
Տ. Բաբգէն Աւագ ԲՆՄ. Մագսուտեան  
Հոգեւոր Հովիւ Ս. Փրորոզդուծիւն Եկեղեցւոյ  
եւ Նախագահ Պատուարժան Միսկան Խորհուրդի  
Ձէյմպլորիւն.

Սիրելի Տէր Բաբգէն,

Ստացած ենք 1964 Մարտ 5 Թուակիր Ձեր տեղեկագիրը, որով կը  
հաղորդէք թէ Ձեր նախագահութեամբ՝ Մարտ 1ին գումարուած Յարեկան  
Միսկան ժողովը կատարած է Միսկան Խորհուրդի մասնակի ընտրութիւն,  
եւ Ներկայացնելով յուշարկութեան արդիւնքը, կը խնդրէք ընտրուած  
անձներուն վաւերացման պաշտօնագիրը:

Նկատի ունենալով որ Ձեր ժողովը տեղի ունեցած է Թեմական  
Կանոնադրութեան տրամադրութեան համաձայն, եւ ընտրութիւնը կատար-  
ուած է ըստ օրինի, այսու կը վաւերացնենք հետեւեալները՝ իբրեւ  
անդամ Միսկան Խորհուրդի:

- Տիարք՝ Ճան Տէվէճեան
- Արթըր Անսպիկեան
- Փիթըր Թալանեան
- Պարլա Ձէյմպլուսեան
- Անդրանիկ Գոյաճեան

Այսու օրհնելով Միսկան Խորհուրդի նոր կազմը, կը մաղթենք  
Ձեզի եւ Ձեր պաշտօնակիցներուն յաջող եւ արդիւնաւոր գործունէու-  
թեան տարի մը, ի պայծառութիւն Ս. Եկեղեցւոյդ եւ ի Հոգեւոր շի-  
նութիւն համայնքիդ մեր սիրեցեալ ժողովուրդին:

Մնամք Տիրաւանդ սիրոյ ողջունիւ  
Աղօթարար

ՍԻՈՆ ԱՐՁԵՊԻՍԿՈՊՈՍ  
Առաջնորդ Հայոց Ամերիկայի  
եւ Գանատայի